



Project funded by
EUROPEAN UNION



Գործողություն A.C.3 - D.C.3.1
**ԳԵՏԵՐԻ ԵՎ ԼՃԵՐԻ ԱՂԲԸ ՆՎԱՐԵՑՆԵԼՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ**

Common borders. Common solutions.





Common borders. Common solutions.



Բովանդակություն

1. Ներածություն. ինչո՞ւ է աղբի հարցը ակտուալ խնդիր	2
1.1. Ի՞նչ է աղբը	2
1.2. Աղբի գոյացումը	3
1.2.1. Ի՞նչ է մտնում քաղաքային աղբի բաղադրության մեջ	3
1.2.2. Ինչպիսի՞ն է աղբի ազդեցությունը կյանքի վրա փոփոխության վրա	5
1.2.3. Օվկիանոսներում և ծովերում գոյացած աղբը	6
2. Աղբի կառավարում և կայուն զարգացում	8
2.1. Նպատակներ	8
2.2. Ինչպե՞ս է պետք կառավարել աղբը	10
3. Ի՞նչ է նշանակում 3R սկզբունքը	11
3.1. Թափոնների նվազեցում	11
3.2. Թափոնների բազմակի օգտագործում	12
3.3. Թափոնների վերամշակում	13
3.4. Թափոնների տարանշատում	16
4. Սև ծովի բնապահպանական խնդիրները	29
5. Ինչո՞ւ է անհրաժեշտ պահպանել երկրի ջրային ռեսուրսները	31

1. Ներածություն. ինչո՞ւ է կարևոր աղբի խնդիրը

1.1. Ի՞նչ է աղբը

Աղբն այն ամենն է, ինչն այլս անպետք է, ուստի սեփականատերը մտադիր է ազատվել դրանից: Սովորաբար, մեր օգտագործած ցանկացած առարկա կամ իր դառնում է աղբ:

Տներում, մեր դպրոցներում, փոքր կամ մեծ խանութներում, վարչական շենքերում և գրասենյակներում առաջացած աղբը քաղաքային աղբ է հանդիսանում: Մեր բնակարաններում առաջացած աղբը կոչվում է «կենցաղային աղբ»:



Կենցաղային աղբը բաղկացած է խոհանոցային օրգանական աղբից, կենցաղային մաքրման թափոններից, հագուատի թափոններից, թղթից և ստվարաթղթից: Կենցաղային աղբի օգայի մասը կազմում են պլաստիկ թափոնները, ինչպես նաև այլ նյութեր, ինչպիսիք են՝ ապակին, ռետինը, կաշին և մետաղը:

Common borders. Common solutions.

1.2. Աղբի գոյացումը


Արդյունաբերական հեղափոխությունից ի վեր, ավելի քան երկու դար շարունակ, գոյացել է ահեղի ծավալի աղբ, որի քանակը վերջին տարիներին կտրուկ աճել է: Համաշխարհային բանկի տվյալներով, 2019 թվականին, միայն քաղաքային թափոնների արտադրությունը հասել է 2,57 միլիարդ տոննայի:

Ըստ հաշվարկների, մինչև 2025 թվականը, քաղաքային բնակչությունը կաճի 3 միլիարդից մինչև 4,3 միլիարդ: Դա նշանակում է, որ մինչև 2025 թվականը, գոյացած թափոնների ծավալները կրկնապատկվեն: 1950 թվականին, աշխարհի բնակչության միայն 29%-ն էր ապրում քաղաքային բնակավայրերում, իսկ 2008 թվականին, ամրող աշխարհի քաղաքային բնակչությունը գերազանցել է զույգական բնակավայրերում ապրող բնակչությանը: Ակնկալվում է, որ մինչև 2050 թվականը, աշխարհի բնակչության 70%-ը կապրի քաղաքներում (ՄԱԿ-ի տվյալներով):

1.2.1. Ի՞նչ է մընում քաղաքային աղբի բաղադրության մեջ

Սովորաբար, քաղաքային աղբը ներառում է աղբի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են սննդամթերզ և «կանաչ» թափոնները, պլաստիկի տարբեր տեսակները, թուղթը և ստվարաթուղթը, ապակին, մետաղը և այլն:

Common borders. Common solutions.



Common borders. Common solutions.

1.2.2. Ինչպիսի՞ն է աղբի ազդեցությունը կյիմայի փոփոխության վրա

Աղբը ջերմոցային գազերի արտանետումների աղբյուրներից մեկն է: Հիմնականում, ջերմոցային գազերը արտանետվում են քաց աղբավայրերից: Օրգանական թափոնների քայլայման արդյունքում աղբանցներից մեթան է արտանետվում, որն ավելի բարձր ջերմային ներուժ ունի, քան CO_2 -ը:

Ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու միջոցներից մեկը թափոնների կրճատումն է, վերաօգտագործումը և վերամշակումը, ինչպես նաև աղբավայրի գազի օգտագործումը: Թափոնների կոմպոստացումը նույնպես մեթանի առաջացումը կանխելու լավ միջոց է:

Վերջին 200 տարում, ջրային ռեսուրսների ինտենսիվ և բազմակողմ օգտագործումը, որը շատ դեպքերում եղել է անօգուտ և իրացիոնալ, այժմ, մարդուն կանգնեցրել է ջրային ռեսուրսների ռացիոնալ կառավարման և բնապահպանական խնդիրների հաղթահարման անհրաժեշտության առաջ:

1.2.3. Օվկիանոսներում և ծովերում գոյացած թափոնները

Ներկայումս, գետերի և ծովերի աղտոտումը աղբով, հատկապես պլաստիկ նյութերով, հիմնական խնդիրներից մեկն է: Ծովերում և օվկիանոսներում գոյացած աղբի 90%-ը կազմում է պլաստիկ աղբը: Օրինակ, վերջին հետազոտությունների համաձայն (EMBLAS-Plus), Ան ծովում հայտնաբերված աղբի 87%-ը պլաստիկ թափոններ են:

Մեկ այլ լուրջ խնդիր է միկրոպլաստիկը, որը ծովամթերքի (ձուկ, փափկամարմիններ) միջոցով կարող է նույնիսկ մուտք գործել մարդու օրգանիզմ: Պլաստիկ նյութերը առավել հաճախ հանդում են ծովեր և օվկիանոսներ գետերից և ծովափերից, թափոնների հավաքման անկանոն համակարգերի և բնակչության որոշ հատվածի իրազեկվածության անբավարար մակարդակի պատճառով:

Ակնկալվում է, որ ծովերում և օվկիանոսներում աղբի քանակը կավելանա՝ բնակչության աճի և սննդի սպառման հետ կապված:



Common borders. Common solutions.

2. Աղբի կառավարում և կայուն զարգացում

2.1. Նպատակներ

Ներկայումս, քաղաքակիրթ աշխարհը միաձայն ընդունում է կայուն զարգացումը որպես ապահով և բարեկեցիկ ապագա ունենալու միակ միջոց:

2015 թվականի սեպտեմբերի 25-ին, ՄԱԿ-ի 193 անդամ երկրները համաձայնության են եկել կայուն զարգացման օրակարգի փաստաթղթի շուրջ, այն է՝ «Փոխակերպելով աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030», որը ներառում է կայուն զարգացման 17 գլոբալ նպատակներ և 169 հատուկ թիրախներ:

17 գլոբալ նպատակներն ընդգրկում են սոցիալական, տնտեսական և բնապահպանական ոլորտները:

1 NO POVERTY 	2 ZERO HUNGER 	3 GOOD HEALTH AND WELL-BEING 	4 QUALITY EDUCATION 	5 GENDER EQUALITY 
Jobs in waste collection and recycling	Reduced food waste, more use of organic waste	Less disease caused by open dumping & burning	Environmental and health training and awareness	Women often bear most of the impact of bad waste mgt
6 CLEAN WATER AND SANITATION 	7 AFFORDABLE AND CLEAN ENERGY 	8 DECENT WORK AND ECONOMIC GROWTH 	9 INDUSTRY, INNOVATION AND INFRASTRUCTURE 	10 REDUCED INEQUALITIES 
Better SWM goes hand in hand with better WASH	Bioenergy opportunities from organic waste	Waste management is the world's largest industry	Recycling innovation is growing and scalable	The poorest are harmed the most by poor waste mgt
11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES 	 SOLID WASTE MANAGEMENT a key to delivering		12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION 	Need to shift from waste to resource management
13 CLIMATE ACTION 	14 LIFE BELOW WATER 	15 LIFE ON LAND 	16 PEACE AND JUSTICE STRONG INSTITUTIONS 	17 PARTNERSHIPS FOR THE GOALS 
Reduced methane & CO2 from dumping & burning	Less plastic pollution in the oceans & sea life	Less pollution on the land, healthier environments	Producer responsibility and governance	Working together: formal & informal, wealthy & poor

Աղյուս՝ <https://wasteaid.org/wp-content/uploads/2016/05/swm-sus-goals-without-zlcomms.png>

Common borders. Common solutions.

2.2. Ինչպե՞ս կառավարել աղբը

Կենցաղային աղբը կազմված է տարբեր տեսակի թափոններից, որոնք քայլայվել են տարբեր ժամանակաշրջաններում: Քայլայման գործընթացով տարանջատում է կատարվում կենսաքայլայվող և ոչ կենսաքայլայվող աղբի միջև:

1970 թվականից ի վեր, մարդկային հասարակությանը մտահոգում է թափոնների կառավարման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը ժամանակակից աշխարհում, լավագույն փորձի ընտրությունը և դրանց առաջնահերթության սահմանումը:

1990 թվականից ի վեր, թափոնների կառավարման մոտեցումները ներկայացնելու համար, օգտագործվում է հիերարխիկ բուրգ: Բուրգը հստակ արտացոլում էր թափոնների կառավարման առավել և պակաս ցանկալի գործողությունները:

Շրջված բուրգը խորհրդանշական հատկություն ունի: Այն ներկայացնում է ամենացանկալի գործողությունները՝ որպես վերջիններին գերիշխող մաս (հատկանիշ 3R կամ «Նվազեցնել, վերաօգտագործել, վերամշակել» սկզբունքը), ինչպես նաև, պակաս ցանկալի՝ որպես նախատեսվող գործողությունների ամենափոքր մաս (թափոնների հեռացում՝ դեպի աղբավայր):

3. Ի՞նչ է նշանակում 3R սկզբունքը

3.1. Թափոնների ՆՎԱԶԵՑՈՒՄ

Կրճատում. այս գործողության նպատակն է կրճատել թափոնները՝ հենց դրանց գոյացման արդյուրում: Սա նշանակում է ոչ միայն կրճատել թափոնների ընդհանուր ծավալը, այլ նաև նվազեցնել դրանց թունավոր լինելու մակարդակը կամ այլ վնասակար հատկությունները:

Թափոնների ծավալի կրճատում կարելի է ապահովել արտադրողների և սպառողների գիտակցությունը փոխելով և ուշադրությունը կենտրոնացնելով այն ապրանքների և փաթեթավորման այն տեսակների վրա, որոնք հանգեցնում են թափոնների քանակի կրճատմանը:

Ի՞նչ է անհրաժեշտ անել՝ թափոնները կրճատելու համար:

- Խուսափել ավելորդ փաթեթավորումից: Խանութներում շատ ապրանքներ պարզապես փաթեթավորվում են գնորդի ուշադրությունը գրավելու համար:
- Նախապատվություն տալ բազմակի օգտագործման ապրանքներին:
 - Նախապատվություն տալ նվազագույն փաթեթավորմանը:
- Նախապատվություն տալ բազմակի օգտագործման կամ վերամշակվող փաթեթավորմանը:
- Նախապատվությունը տալ վերամշակվող և էկոլոգիապես մաքուր փաթեթավորման նյութերին:
 - Օգտագործել բազմակի օգտագործման տոպրակներ՝ մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների փոխարեն:

Common borders. Common solutions.

3.2. Թափոնների ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Վերաօգտագործում. Այս գործողության նպատակը նյութի, արտադրանքի և (կամ) դրա բաղադրիչի վերաօգտագործումն է՝ կանխելու համար այն աղբի վերածվելուն:

Իհարկե, հնարավոր չէ ամբողջությամբ կանխել աղբի առաջացումը, այդ իսկ պատճառով առաջացած աղբի վերաօգտագործումը կարևոր դեր է խաղում:

Բազմակի օգտագործումը նշանակում է տարբեր ապրանքների և նյութերի բազմակի օգտագործում՝ փոխարինող միջոցներ գնելու փոխարեն։ Սա ներառում է բազմակի և երկարաժամկետ օգտագործման համար պիտանի ապրանքների և նյութերի ձեռքբերում, վնասված արտադրանքի վերականգնում և այլն։

Հարկ է նշել, որ եթե մի մասի համար թափոնը աղբ է, մյուսների համար այն կարող է հանդիսանալ ցանկալի արտադրանք։

Common borders. Common solutions.

3.3. Թափոնների ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Վերամշակում. Վերականգնողական գործողություն, որի միջոցով թափոնները վերածվում են արտադրանքի, նյութի կամ տարրի, որը կարելի է օգտագործել որպես սկզբնական նյութ կամ այլ նպատակներով:

Վերամշակումն ավելի ծախսարդյունավետ մեթոդ է, քան նոյն նյութերն ու ապրանքները նոր հոմքից արտադրելը:


Վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս վերամշակել թափոնների 90%-ը: Կենցաղային աղքի մեծ մասը վերամշակելի է: Դրանցից ամենամեծ տեղը գրավում են ապակին, պլաստիկ նյութերը, մետաղը, թուղթը և օրգանական թափոնները:

Հիմնական խնդիրը ոչ թե վերամշակման տեխնոլոգիաներն են, այլ վերամշակվող նյութերի տարանջատումը այլ թափոններից:

The most favorable option



The least favorable option



REUSE
REDUCTION
RECYCLE



- 1 reduce
- 2 reuse
- 3 recycle
- 4 energy recovery
- 5 storage

Աղյուս՝ <https://wmp.ge/wmp2/>

Common borders. Common solutions.



Վերամշակման միջազգային խորհրդանշը

Այս խորհրդանշը ստեղծվել է ամերիկացի ռաանող Հարի Անդերսոնի
կողմից՝ 1970 թվականին:

Ապրանքի վրա կիրառվող այս նշանը նշանակում է, որ այն պատրաստված է
վերամշակված հոմքից կամ նյութից, որը կարելի է նոյնականացնել:

Հաճախ, այս խորհրդանշի առկայությունը զգայիրեն հեշտացնում է
թափոնների տարանջատման գործընթացը, այն է՝ թափոնի տեսակից
կախված տեսակավորումը:

Common borders. Common solutions.

3.4. Թափոնների ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄ

Թափոնների տարանջատման ժամանակակից մոտեցումներից մեկը դրանց գոյացման աղբյուրի տարանջատումն է, ինչը նշանակում է, որ թափոններ արտադրողներն իրենք են իրականացնում թափոնների տեսակավորում՝ ըստ դրանց տեսակի, ինչպես նաև դրանց հետագա հեռացման մեթոդի:

Մասնավորապես, կարելի է կիրառել հետևյալ գործողությունները.

- Վերամշակման ենթակա թափոնների մատակարարում՝ դրանք պահեստավորման կետեր,
- Վերամշակվող թափոնների հեռացում՝ որոշակի վճարի դիմաց,
- ըստ տեսակի առանձնացված թափոնները (օրինակ՝ թուղթ, պլաստիկ նյութեր, ապակի, մետաղ)՝ հատուկ տարանների մեջ տեղավորում:

3R սկզբունքը՝ թղթի համար

Թուղթն ամենալայն օգտագործվող վերամշակվող նյութերից է: Թղթի արտադրության պատմությունը սկսվում է հին Չինաստանից, սակայն փայտամշակման տեխնոլոգիաները ի հայտ են եկել միայն 19-րդ դարի վերջին:

Թուղթը կարելի է վերամշակել մինչև 5-7 անգամ: Այնուհետև, մանրաթելերը բավականին կարճանում են, և թղթի արտադրությունն անհնար է դառնում:

DID YOU KNOW?

**17
TREES**



MAKE

**1 TON
OF PAPER**



**SAVE PAPER
SAVE TREES**

Աղյուս՝ <https://www.visy.com.au/>

Common borders. Common solutions.

3R սկզբունքը՝ պլաստիկ նյութերի համար

1960-ական թվականներին սկսվեց պլաստիկ նյութի ինտենսիվ օգտագործումը:

Պատմականորեն, պլաստիկի և պլաստիկ փաթեթավորման նյութերի արտադրությունը սկսվել է էժան նավթի, քիմիական նյութերի և նոր տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ:

Վերջին 50 տարիների ընթացքում, պլաստիկ նյութի դերն ու նշանակությունը տնտեսության մեջ անշեղորեն աճում է: 1960-ականներից ի վեր, պլաստիկ նյութի համաշխարհային արտադրությունն աճել է 30 անգամով, իսկ 2015 թվականին արտադրվել է 322 միլիոն տոննա պլաստիկ նյութ: Ակնկալվում է, որ առաջիկա 20 տարում այն կրկին կրկնապատկվի:

Պլաստիկ նյութերը շատ տարածված են փաթեթավորման մեջ և ունեն տարբեր նպատակներ՝ սննդամթերքի պահպանում և պահեստավորում դրանց փաթեթավորումն ու բաշխումը, ստվարաթղթե տուփերը լցնելը և հաճախորդներին տեղեկացնելը:

Այսօր, պլաստիկ նյութի համաշխարհային արտադրության 41%-ն օգտագործվում է որպես փաթեթավորման նյութ, իսկ այդ քանակի 47%-ը՝ սննդամթերքի փաթեթավորման համար:

Պլաստիկ նյութը օգտագործվում է, մասնավորապես, զովացուցիչ ըմպելիքների, բանջարեղենի և յուղերի, կոսմետիկայի, օճանելիքի և այլ ապրանքների փաթեթավորման համար:

Պլաստիկ նյութի ծածկագրերը

Կենցաղային իրերի փաթեթավորման մեջ պլաստիկ նյութը հետությամբ բացահայտելու, առանձնացնելու և վերամշակելու համար, 1988 թվականին, Պլաստիկ նյութերի արդյունաբերության միությունը սահմանեց պլաստիկ նյութերի տեսակներն ու ծածկագրերը:

Միության ծածկագրերը լայնորեն օգտագործվում են փաթեթավորման նյութերի մակնշման համար: Այս պրակտիկան պարտադիր է շատ երկրներում:



Common borders. Common solutions.


Պլաստիկ նյութի վերամշակումը

Ժամանակակից կյանքում, պլաստիկ թափոնների կառավարումը բնապահպանական ամենահրատապ խնդիրներից մեկն է:

Պլաստիկ թափոնների ամենալայնածավալ օգտագործումը դրա վերամշակումն է:
Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ պլաստիկ նյութի վերամշակման արդյունքում արտադրվում են մի շարք ապրանքներ, ինչպիսիք են՝ խողովակները, տակառները, խաղալիքները, կահույքը, ծածկոցները, հագուստը, կոշիկը:

Պլաստիկ թափոնների վերամշակումն իրականացվում է, մասնավորապես, մեխանիկական վերամշակմամբ, որը խառը պլաստիկ թափոնների դեպքում ենթադրում է տեսակավորում և նախնական նոյնականացում, մանրացում, ապա տարանջատում, լվացում, չորացում և հատիկավորում:

Նախնական տեսակավորումը ենթադրում է թափոնների չմշակված տարանջատում ըստ տարրեր հատկությունների՝ գույնի, չափի, ձևի, պլաստիկ նյութի տեսակի:



EDUCATION IN RESOURCE RECOVERY

visy.com.au/recycling/educationԱյսուհետև՝ <https://www.visy.com.au/>

Common borders. Common solutions.


3R սկզբունքը՝ էլեկտրոնային թափոնների համար (E-WASTE)

Թափոնների կառավարումը առանձնացնում է թափոնների հատուկ տեսակներ, որոնք հատուկ ուշադրություն են պահանջում՝ շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունները նվազեցնելու համար։ Դրանք ներառում են՝ փաթեթավորման նյութեր, վնասաված մեքենաներ, էլեկտրական մարտկոցներ, էլեկտրական և էլեկտրոնային թափոններ (այսուհետ՝ էլ-թափոններ)։

Ո՞րն է տարբերությունը էլեկտրական սարքավորումների և էլեկտրոնայինի միջև։	Էլեկտրոնային թափոնների կատեգորիաներն են.
<p>Էլեկտրական սարքերը էլեկտրական հոսանքի հաղորդիչներ են, որոնք սարքին մատակարարում են էլեկտրաէներգիա (անջատիչներ, շարժիչներ, լամպեր), որը վերածվում է ջերմության, մեխանիկական էներգիայի կամ լրցու։ Էլեկտրական սարքերը հագեցված չեն, այսպես կոչված, «որոշումներ կայացնելու գործիքներով»։</p> <p>Էլեկտրոնային սարքերում հնարավոր է խափանել կամ կարգավորել ազդանշանը (սառնարան, լվացքի մեքենա, միկրոալիքային վառարան, փոշեկուլ)։ Պարզ է, որ սարքը հաճախ համատեղում է երկու բարդադիջներով՝ էլեկտրական և էլեկտրոնային։</p>	<ul style="list-style-type: none"> մեծ և փոքր կենցաղային ապրանքներ, տեղեկատվական և տեխնոլոգիական հեռահաղորդակցության սարքավորումներ, սարքավորումներ սպառողի համար; լուսային սարքավորումներ, էլեկտրոնային և էլեկտրականությամբ աշխատող գործիքներ, բացառությամբ ֆիքսված արդյունաբերական գործիքների, խաղալիքներ, սպորտային և հանգստի սարքավորումներ, բժշկական սարքավորումներ (բացառությամբ իմպալանտացված և վարակված արտադրանքների), մշտադիտարկման և ստուգման գործիքներ, ավտոմատ հեղուկացիրներ։

Էլ.թափոնների վերամշակումը բաղկացած է երեք հիմնական փուլից.

1. ընտրովի տարրալուծում՝ թանկարժեք և/կամ վտանգավոր նյութերի տարանջատում,
2. նորացում՝ նյութերի բաղադրության նորացում՝ մեխանիկական կամ մետալուրգիական մշակմամբ,
3. զտում՝ վերջնական փուլ, երբ ստացված նյութը վերամշակվում է (մշակվում) քիմիական կամ մետալուրգիական եղանակով (պիրոմետալուրգիական կամ հիդրոմետալուրգիական մեթոդ):



Common borders. Common solutions.

Թափոնների ընտրովի հավաքումը հեշտացնելու համար օգտագործվում են պլաստմասե կամ մետաղական աղբարկեր՝ տարբեր գոյներով և/կամ մակագրությամբ: Դրանց ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված այդ տարածքում հավաքվող թափոնների հոսքից:

Յուրաքանչյուր տեսակի
թափոնների համար,
տարաները բաժանված են այսպես՝

- թուղթ և ստվարաթուղթ՝
կապոյտ գոյն,
- ապակի՝ կանաչ գոյն,
- պլաստիկ նյութեր/պլաստմասա
և մետաղներ՝ դեղին գոյն:

PAPER PLASTIC GLASS ORGANIC



Թափոնները, որոնք չեն կարող վերամշակվել և չեն պատկանում վերը թվարկված տեսակներից որևէ մեկին, հավաքվում են շագանակագույն, մոխրագույն կամ սև տարաներում:

Common borders. Common solutions.



Ինչպե՞ս ճիշդի հավաքել թուղթը.

- հավաքել այն թղթերը, որոնք այլսա չեն կարող օգտագործվել փաթեթավորման կամ գրելու համար;
- սեղմել ստվարաթղթե տուփերը՝ հնարավորինս թից տեղ զբաղեցնելու համար,
- պահել դրանք թղթի հավաքման համար հատուկ նախատեսված վայրում:

Ինչպե՞ս ճիշդի հավաքել շերը.

- մաքրել բոլոր ապակե առարկաները կամ տարաները կեղտոտվածությունից,
- պահել դրանք շերի հավաքման համար հատուկ նախատեսված վայրում:



Common borders. Common solutions.

Ինչպե՞ս ճիշդի հավաքել պլաստիկ նյութերը.

- լվալ պլաստիկ նյութից պատրաստված իրերը,
- ստուգել փաթեթավորման վրա գրված տեղեկատվությունը,
- սեղմել դրանք՝ հնարավորինս քիչ տեղ զբաղեցնելու համար,
- պահել դրանք պոլիէթիլենային տերեֆտալատ/պլաստիկ (PET) թափոնների համար հատուկ նախատեսված վայրում՝ ըստ այն կատեգորիայի, որին դրանք պատկանում են:



Ինչպե՞ս ճիշդր հավաքել մետաղական թափոնները.

- մաքրել բոլոր առարկաները և դրանց փաթեթավորումը կեղտոտվածությունից,
- հարթեցնել փաթեթավորումը՝ հնարավորինս քիչ տեղ զբաղեցնելու համար,
- պահել դրանք մետաղ հավաքելու համար հատուկ նախատեսված վայրում:



Common borders. Common solutions.

Ինչպե՞ս ճիշդ հավաքել տպիչի լրուներ, մարտկոցներ և էլեկտրոնիկա.

Տպիչի տոներ՝ կարելի է գնել տպիչի տոներ այն ընկերություններից, որոնք առաջարկում են քարթիջների վերամշակման ծառայություններ,

մարտկոցներ՝ դրանց պարունակությունը հատկապես թունավոր է, տանել դրանք առանձին հավաքման կետներ (օրինակ՝ սուպերմարկետ, էլեկտրական և էլեկտրոնային սարքերի խանութներ և այլն),

Էլեկտրոնիկա՝ պահել դրանք հատուկ նախատեսված վայրում, որտեղ դրանք ապամոնտաժվելու են՝ վերամշակման համար:



4. ԱՆ ԾՈՎԻ ԲՆԱՊԱՀԱՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ


ԱՆ ԾՈՎԸ ՉՅԱ ՊԳՎԱՅՈՒՆ Է ՄԱՐԴԱԾԻՆ ԱՊՀԵՑՈՎԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԻՐ ՄԵԾ ԶՐԱՅԻՆ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԻ և ՀԱՄԱՀԱՐԻՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԻԵՏ ՍԱՀՄԱՆԱՎԻԱԿ ԿԱՎԻ ՊԱՏճԱռՈՎ:

ԱՆ ԾՈՎԻ ԱԼՍՈՒՏՎԱԾՈՎԹՅՈՒՆԸ և ՆԻՐԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳԵՐՈԳՄԱԳՈՒՅՈՒՄԸ, ՎԵՐՁԻՆ 50 ՏԱՐԻՆԵՐԻ ընթացքում, հանգեցրել են ԶՐԻ ՈՐԱԿԻ և ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՄՐՈՎԿ ՎԱՏԹԱՐԱԳՄԱՆ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱյՐԻ ՎԼՈ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԱՊՀԵՑՈՎԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻԻՄՆԱԿԱՆՈՒՄ, ԱՎԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՑՈՆՈՎ.

1. ԱՆ ԾՈՎԻ ՎԵՐԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԻՃԱԿՈՎ,
2. ԾՈՎԻ ԱԼՍՈՒՏՄԱՄԲ ԾՈՎԻ ԱՎԻՀՆ ՄԵԼԱԿԱՅՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕՐԵԿՈՆՆԵՐԻ և ԻՆՍԱՆՔՆ Ի ՎԱՐ ԼՊՂԱԳՈՂ ԱԼՍՈՒՏԻՇՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:

ԱՆ ԾՈՎԻ ԱՎԻԱՄԵՐԸ ԶՐԵՐԻ ԻԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ԵՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՎԻՈՆՆԵՐԻԳ ՀՄԱՋՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԵՂՏԱՁՐԵՐԻ և ԾՈՎԱՅԻՆ ԱՐԺԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԸ:



Common borders. Common solutions.

5. Ինչո՞ւ է անհրաժեշտ պահպանել Երկրի ջրային ռեսուրսները

Մեր մոլորակը ջրի մոլորակ է, և Երկրի մակերեսի 3/4-ը ծածկված է ջրով: Ջուրը եզակի և անփոխարինելի բնական ռեսուրս է, և դրանով այն տարբերում այլ բնական ռեսուրսներից:

Ջուրը ֆիզիկական և քիմիական միջավայրի ստեղծման, կյամայի և եղանակի ձևավորման հիմնական գործոնն է: Որտեղ ջուր չկա, չկա նաև կյանք: Կենդանի օրգանիզմներին հասանելի քաղցրահամ ջուրը կազմում է մոլորակի ջրային պաշարների շատ փոքր մասը (ընդամենը 0,014%): Այսպիսով, ամբողջ աշխարհում, առանձնահատուկ նշանակություն է տրվում ջրի ռացիոնալ օգտագործմանը և դրա պահպանմանը՝ աղտոտումից:

Վերջին 200 տարում, ջրային ռեսուրսների ինտենսիվ և բազմակողմ օգտագործումը, որը շատ դեպքերում եղել է անօգուտ և իռացիոնալ, այժմ, մարդուն կանգնեցրել է ջրային ռեսուրսների ռացիոնալ կառավարման և բնապահպանական խնդիրների հայթահարման անհրաժեշտության առաջ:

Ներկայումս, աշխարհի բոլոր երկրները կենտրոնանում են ջրային ռեսուրսների օգտագործման վրա՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները:



bEECO
BSB 1107

LET'S BE ECO IN
THE BLACK SEA BASIN!

Common borders. Common solutions.



CROSS BORDER
COOPERATION



Common borders. Common solutions.



Նյութի խմբագիր.
Pro Natura Galati ասոցիացիա
Յանց՝ Գալատիի քաղաքապետարան,
Ռումինիա, Dr. Nicolae Alexandrescu Str., 4
Հեռ.՝ +40748209450
փոստ՝ galatipronatura@gmail.com

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020
Pro Natura Galati Association
March 2022

Joint Operational Programme Black Sea Basin 2014-2020 is co-financed by the European Union through the European Neighbourhood Instrument and by the participating countries: Armenia, Bulgaria, Georgia, Greece, Republic of Moldova, Romania, Turkey and Ukraine.

This publication was produced with the financial assistance of the European Union. Its contents are the sole responsibility of Pro Natura Galati Association and do not necessarily reflect the views of the European Union.

Common borders. Common solutions.